ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶ

ՀՐԱՄԱՆ № 45-Լ

«30» 05 2025 թ. գ. Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԶԻՆՎԱԾ ՈՒԺԵՐՈՒՄ ԵՎ ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐՈՒՄ ՄԱՀՎԱՆ ԴԵՊՔԵՐԻ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ՔՆՆՈՒԹՅԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 1-Ի N 38 ՀՐԱՄԱՆՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի դեկտեմբերի 26-ի N 1978-Լ որոշման Հավելված 2-ի թիվ 4 գործողությունը Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի կողմից 2021 թվականի ապրիլի 1-ին ընդունվել է «Հայաստանի Հանրապետության զինված ուժերում և քրեակատարողական հիմնարկներում մահվան դեպքերի արդյունավետ քննության չափորոշիչներ սահմանելու մասին» N 38 հրամանը: Միևնույն ժամանակ, հաշվի առնելով «Մուրադյանն ընդդեմ Հայաստանի» խումբ գործերով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի կողմից կայացված վճիռներով արձանագրված՝ Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի 2-րդ հոդվածի դատավարական հայեցակետի խախտումները, նշված խումբ գործերով կայացված վճիռների կատարման ընդհանուր միջոցառումների իրականացման կարևորությունը, 2022 թվականի հուլիսի 1-ից ուժի մեջ մտած՝ Հայաստանի Հանրապետության քրեական և քրեական դատավարության նոր օրենսգրքերի կարգավորումները՝ անհրաժեշտություն է առաջացել սահմանել զինված ուժերում և քրեակատարողական հիմնարկներում մահվան դեպքերի արդյունավետ քննության նոր չափանիշներ:

Հիմք ընդունելով վերոգրյալը, ղեկավարվելով «Դատախազության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ կետով և 30-րդ հոդվածի 3-րդ մասով՝

Հրամայում եմ՝

1. Սահմանել Հայաստանի Հանրապետության զինված ուժերում և քրեակատարողական հիմնարկներում մահվան դեպքերի արդյունավետ քննության չափանիշները՝ համաձայն հավելվածի (այսուհետ նաև՝ Հավելված):

2. Հայաստանի Հանրապետության զինվորական դատախազին, Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության վարչությունների պետերին, Երևան քաղաքի, Երևան քաղաքի վարչական շրջանների և մարզերի դատախազներին, կայազորների զինվորական դատախազներին, Հայաստանի Հանրապետության զինվորական կենտրոնական դատախազության բաժինների պետերին և ավագ դատախազներին՝ վերաբերելի դեպքերում ապահովել Հավելվածով սահմանված չափանիշների անշեղ կիրառումը:

3. ՀՀ գլխավոր դատախազի խորհրդական Լ. Մարտիրոսյանին՝ ՀՀ գլխավոր դատախազին զեկուցելուց հետո, նախաքննության գաղտնիության սկզբունքի պահպանմամբ, ապահովել զինված ուժերում և ազատությունից զրկման վայրերում գրանցված և հանրային մեծ հնչեղություն ունեցող մահվան դեպքերով իրականացվող քննության ընթացքի վերաբերյալ տեղեկատվության պարբերաբար հրապարակումը ՀՀ դատախազության պաշտոնական կայքէջում:

4. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից: Սույն հրամանն ուժի մեջ մտնելուց հետո ուժը կորցրած ճանաչել «Հայաստանի Հանրապետության զինված ուժերում և քրեակատարողական հիմնարկներում մահվան դեպքերի արդյունավետ քննության չափորոշիչներ սահմանելու մասին» Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի 2021 թվականի ապրիլի 1-ի N 38 հրամանը:

5. Սույն հրամանի պատճենն ուղարկել Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի տեղակալներին, Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության վարչությունների պետերին, Երևան քաղաքի, Երևան քաղաքի վարչական շրջանների և մարզերի դատախազներին, կայազորների զինվորական դատախազներին, Հայաստանի Հանրապետության զինվորական կենտրոնական դատախազության բաժինների պետերին և ավագ դատախազներին, Հայաստանի Հանրապետության դատախազության գլխավոր քարտուղարին և տեղակալներին,

Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի խորհրդականներին և օգնականներին:

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ԵՐՐՈՐԴ
ԴԱՍԻ ՊԵՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱԿԱՆ Ա.ՎԱՐԴԱՊԵՏՅԱՆ

Հավելված
Հայաստանի Հանրապետության
գլխավոր դատախազի
2025 թվականի մայիսի 30-ի
թիվ «47/» հրամանի

ՉԱՓԱՆԻՇՆԵՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԶԻՆՎԱԾ ՈՒԺԵՐՈՒՄ ԵՎ ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐՈՒՄ ՄԱՀՎԱՆ ԴԵՊՔԵՐԻ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ՔՆՆՈՒԹՅԱՆ

1. Հայաստանի Հանրապետության զինված ուժերում և քրեակատարողական հիմնարկներում մահվան դեպքերի քննությունը պետք է իրականացվի անկախության, բազմակողմանիության, համարժեքության, անհապաղ և ողջամիտ ժամկետում գործի քննության, պատշաճ ջանասիրության, հանրային հսկողության, գործի քննությանը տուժողների հարազատների մասնակցության չափանիշների հիման վրա:

2. Զինված ուժերում մահվան դեպքերի առթիվ նախաձեռնված քրեական վարույթներով նախաքննության օրինականության նկատմամբ հսկողություն իրականացնելիս անհրաժեշտ է ապահովել, որ

1) քրեական վարույթ նախաձեռնվելուց անմիջապես հետո ձեռնարկվեն քննության համար անհրաժեշտ և գործի հանգամանքները բացահայտելու հնարավորություն ընձեռող բոլոր միջոցները և պատշաճ հետազոտվեն դեպքի հանգամանքները.

2) քրեական վարույթ նախաձեռնվելուց անմիջապես հետո անհապաղ կատարվեն քննչական և վարութային անհրաժեշտ գործողությունները՝ մահվան պատճառի վերաբերյալ հնարավոր բոլոր վարկածներն առաջ քաշելու, արագ, զուգահեռ և պատշաճորեն ստուգելու, ինչպես նաև՝ ենթադրյալ հանցավոր արարք կատարած անձանց հայտնաբերելու և նրանց նկատմամբ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով քրեական հետապնդում հարուցելու ուղղությամբ.

3) քրեական վարույթ նախաձեռնվելուց հետո ձեռնարկվեն բոլոր ողջամիտ միջոցները՝ ձեռք բերելու համար տվյալ դեպքի վերաբերյալ ապացույցներ, որոնց միջոցով հնարավոր է ստանալ դեպքի ամբողջական, ճշգրիտ պատկերը և կլինիկական տվյալների, այդ թվում՝ մահվան պատճառների օբյեկտիվ վերլուծությունը.

4) քննությունը սկսելուց անմիջապես հետո ձեռնարկվեն միջոցներ դեպքին ականատես կամ դեպքի վերաբերյալ տեղեկությունների տիրապետող վկաների շփումը

միմյանց հետ բացառելու կամ նվազագույնի հասցնելու ուղղությամբ և այդ ընթացքում հնարավորինս արագ կազմակերպվի վկաների հարցաքննությունը՝ նրանց առաջադրելով առաջ քաշված բոլոր վարկածների ստուգմանն ուղղված հարցեր.

5) յուրաքանչյուր դեպքում քննարկվի դեպքի վերաբերյալ առավել կարևոր տեղեկությունների տիրապետող զինծառայող վկաների նկատմամբ համածառայակիցների կամ վերադասների կողմից հնարավոր ճնշումներ գործադրելու հնարավորությունը, այդ մասին վկայող տվյալների կամ վտանգի առկայության դեպքում կիրառել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված հատուկ պաշտպանության միջոց (օրինակ՝ փոխել զինծառայողի ծառայության վայրը).

6) վկաները, որոնց ծառայության վայրը փոխվել է հատուկ պաշտպանության միջոց կիրառելու արդյունքում, քննության նպատակներից ելնելով չենթարկվեն օրենքով չնախատեսված սահմանափակումների, ինչպես նաև բացառվի այդ նպատակներով զինվորական կանոնագրքերով նախատեսված սահմանափակումների կիրառումը (արձակումից զրկում, արձակուրդի տրման հետաձգում և այլն).

7) առարկայական քննություն կատարվի մահացած զինծառայողների փորձաքննությամբ հայտնաբերված բոլոր վնասվածքների՝ անկախ մահվան հետ ունեցած պատճառական կապից, առաջացման վաղեմությունն ու հանգամանքները պարզելու ուղղությամբ, մանրամասնորեն ստուգվեն այդ կապակցությամբ ստացված բոլոր, այդ թվում՝ տուժողի մերձավոր ազգականների կողմից ներկայացված տեղեկությունները.

8) դեպքի վայրի զննությանը, կախված հետազոտման ենթակա իրադրության ու օբյեկտների բնույթից, մասնակից դարձվեն համապատասխան բնագավառի փորձագետներ՝ վարույթի համար նշանակություն ունեցող բոլոր հետքերն ու օբյեկտները պատշաճ կարգով արձանագրելու և վերցնելու համար.

9) բացառվի ապացույցների հավաքման գործընթացում ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով չնախատեսված գործողությունների կատարմամբ ապացուցողական նշանակություն ունեցող օբյեկտների հետազոտումն ու տվյալների արձանագրումը.

10) ցուցաբերվի հետևողականություն, որպեսզի դատաբժիշկ-փորձագետների կողմից փորձագետի եզրակացությամբ և հարցաքննությունների ժամանակ սպառիչ ու հիմնավոր պատասխաններ տրվեն անհրաժեշտ հանգամանքների պարզման կապակցությամբ առաջադրված հարցերին, իսկ տարբեր փորձագետների (բժիշկ-մասնագետների) կողմից հակասական տվյալներ ներկայացվելու դեպքում կատարվի քննություն հակասությունների պարզաբանման կապակցությամբ՝ ապահովելով քննության

առարկա հանգամանքի վերաբերյալ պատճառաբանված հետևությունների հանգելու հնարավորություն.

11) քննության առարկա դարձվեն հետաքննության մարմնից քրեական վարույթով պարզաբանման ենթակա հանգամանքների վերաբերյալ ստացված, մինչ այդ պահը քննությանն անհայտ կամ ձեռք բերված տվյալներին հակասող տվյալները, անհրաժեշտության դեպքում պահանջվեն և ուսումնասիրվեն օպերատիվ-հետախուզական միջոցառումների վերաբերյալ ստուգման ենթակա փաստաթղթերը.

12) մարմնական վնասվածքների առաջացման բոլոր վայրերը ենթարկվեն զննության՝ այդ քննչական գործողության նպատակներին համապատասխան օբյեկտներ, հետքեր ու հատկանիշներ հայտնաբերելու և ամրագրելու նպատակով:

13) զինծառայողներին իրենց ծառայության վայրից դուրս հարցաքննելիս ապահովվի ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 149-րդ հոդվածի 5-րդ մասի պահանջների պահպանումը, այդ կապակցությամբ պատշաճ կերպով կազմված փաստաթղթերը կցվեն քրեական վարույթի նյութերին.

14) բացառվի քրեական հետապնդում հարուցելու հիմքերի առկայության պայմաններում անձանց մասնակցությունը գործով վարույթին որպես վկա.

15) նախաքննության ընթացքում տվյալ վարույթին առնչվող, վատ վերաբերմունքի կամ խոշտանգման փաստով քննվող քրեական վարույթով կայացված վերջնական որոշումը կամ դատավճիռը ստացվելու դեպքում, որով կհաստատվի այս կամ այն ապացույցի՝ այդպիսի վերաբերմունքի արդյունքում ձեռք բերված լինելու հանգամանքը, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 97-րդ հոդվածի 11-րդ մասի պահանջին համապատասխան ապացույցի անթույլատրելիությունը հաստատվի վարույթն իրականացնող մարմնի որոշմամբ և բացառվի դրա օգտագործումն ապացուցման գործընթացում.

16) միջոցներ ձեռնարկվեն հնարավորինս սեղմ ժամկետում մահացած տուժողի մերձավոր ազգականներից որևէ մեկին նրա փոխարեն տուժող ճանաչելու և այդ կարգավիճակով նրան վարույթին մասնակից դարձնելու կապակցությամբ՝ ապահովելով տուժողի իրավունքների լիարժեք իրացման հնարավորություն.

17) տուժողի մերձավոր ազգականների կողմից ցանկություն արտահայտելու յուրաքանչյուր դեպքում, հնարավորության սահմաններում, կազմակերպվի նրանց ընդունելություն հսկող կամ վերադաս դատախազի մոտ, նախաքննության գաղտնիության սկզբունքի պահպանմամբ՝ հնարավորինս սպառիչ պարզաբանումներ տրամադրվեն վերջիններիս մտահոգող հարցերի կապակցությամբ.

18) քննությունը իրականացվի ողջամիտ ժամկետներում, միջոցներ ձեռնարկվեն նշանակված փորձաքննությունների կատարումը սեղմ ժամկետում ապահովելու և

եզրակացություններ ստանալու ուղղությամբ, խստորեն պահպանվեն քրեական հետապնդման ժամկետները, դրանց կասեցումն ու վերսկսումը կատարվի համապատասխան հիմքեր ի հայտ գալուց անմիջապես հետո, քննիչի կողմից հսկող դատախազի հանձնարարությունները պարբերաբար չկատարելու կամ օրենքի այլ կոպիտ խախտում թույլ տալու դեպքում քննարկվի վերջինիս վարույթին մասնակցելուց հեռացնելու և կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցը.

19) պարտադիր քննության առարկա դարձվի հրամանատարական կազմի կողմից իրենց պաշտոնեական լիազորությունները պատշաճ կատարելու հարցը.

20) քննության ընթացքի և արդյունքների նկատմամբ առկա լինի բավարար հանրային հսկողություն: Ընդ որում, քննության արդյունավետության նվազագույն շեմը բավարարող հանրային վերահսկողության բնույթը և աստիճանը կախված պետք է լինեն կոնկրետ գործի հանգամանքներից.

21) քննության արդյունքները հիմնված լինեն գործի բոլոր բաղադրիչների համակողմանի, օբյեկտիվ և անկողմնակալ վերլուծության վրա:

3. Ազատությունից զրկման վայրերում մահվան դեպքերի առթիվ նախաձեռնված քրեական վարույթներով նախաքննության օրինականության նկատմամբ հսկողություն իրականացնելիս անհրաժեշտ է ապահովել, որ

1) ազատությունից զրկման վայրերում արձանագրված մահվան յուրաքանչյուր դեպքի հանգամանքները քննության առարկա դարձվեն նախաձեռնված քրեական վարույթի շրջանակներում.

2) ազատությունից զրկման վայրի վարչակազմի կողմից մահվան դեպք հայտնաբերելուց հետո դեպքի վայրը մեկուսացվի և բացառվի կողմնակի անձանց մուտքը: Այդ նպատակով, խցերում մահվան դեպք հայտնաբերելու յուրաքանչյուր դեպքում, պարտադիր քննարկման առարկա դարձվի խցերում պահվող անձանց ժամանակավորապես, մինչև անհրաժեշտ դատավարական գործողությունների կատարումը, այլ խցեր տեղափոխելու հարցը.

3) քննությունը սկսելուց անմիջապես հետո ձեռնարկվեն միջոցներ դեպքին ականատես կամ դեպքի վերաբերյալ տեղեկությունների տիրապետող վկաների շփումը միմյանց հետ բացառելու կամ նվազագույնի հասցնելու ուղղությամբ և այդ ընթացքում հնարավորինս արագ կազմակերպվի վկաների հարցաքննությունը՝ նրանց առաջադրելով առաջ քաշված բոլոր վարկածների ստուգմանն ուղղված հարցեր: Այդ նպատակով՝ ազատությունից զրկման վայրի վարչակազմի ղեկավարին առաջարկվի քննարկել նման անձանց տարբեր խցերում տեղաբաշխելու հարցը.

4) բռնի մահվան կամ ինքնասպանության յուրաքանչյուր դեպքով պարտադիր քննության առարկա դարձվի դեպքին քրեական ենթամշակույթ կրող անձանց հնարավոր ներգրավվածության հարցը, այդ նպատակով իրականացվի համակողմանի քննություն.

5) բռնի մահվան կամ ինքնասպանության յուրաքանչյուր դեպքով՝ դեպքի վայրի զննությունը կատարվի դատական բժշկի, իսկ անհնարինության դեպքում՝ բժիշկ-մասնագետի մասնակցությամբ, կախված հետազոտման ենթակա իրադրության ու օբյեկտների բնույթից՝ դրան մասնակից դարձվեն նաև այլ մասնագետների՝ գործի համար նշանակություն ունեցող բոլոր հետքերն ու օբյեկտները պատշաճ կարգով արձանագրելու և վերցնելու համար: Ապահովվի դեպքի վայրի զննության արձանագրությանը կից՝ գունավոր լուսանկարչական հավելվածի առկայությունը:

6) ցուցաբերվի հետևողականություն, որպեսզի դատաբժիշկ-փորձագետների կողմից փորձագետի եզրակացությամբ և հարցաքննությունների ժամանակ սպառիչ ու հիմնավոր պատասխաններ տրվեն վերը նշված հարցերի պարզման կապակցությամբ առաջադրված հարցերին, իսկ տարբեր փորձագետների /մասնագետների/ կողմից հակասական տվյալներ ներկայացվելու դեպքում կատարվի քննություն հակասությունների պարզաբանման կապակցությամբ՝ ապահովելով քննության առարկա հանգամանքի վերաբերյալ պատճառաբանված հետևությունների հանգելու հնարավորություն.

7) ազատությունից զրկված անձի մահվան դեպքով նախաձեռնված յուրաքանչյուր վարույթով քննության առարկա դարձվեն ազատությունից զրկման վայրի վարչակազմի գործողությունները՝ մահացածի կյանքին սպառնացող իրական և անմիջական վտանգի առկայությունը պարզելու և այն կանխելու նպատակով վերջինիս գործողությունների շրջանակը պարզելու ուղղությամբ.

8) անհապաղ միջոցներ ձեռնարկվեն մահացածի վերաբերյալ ազատությունից զրկման վայրում գտնվող փաստաթղթերը և գործի լուծման համար էական նշանակություն ունեցող այլ պարագաները (անձնական իրեր, հիվանդության պատմագրերը, իրականացված հետազոտությունների արդյունքները, բժշկական միջամտության առարկաները և այլն) առգրավելու ուղղությամբ.

9) ազատությունից զրկման վայրում մահվան դեպքի հանգամանքները ՀՀ քրեական օրենսգրքի 187-րդ հոդվածի 2-րդ մասով նախաձեռնված քրեական վարույթի շրջանակներում քննվելու դեպքում, քննության առարկա դարձվեն ազատությունից զրկման վայրի բուժմասում պատշաճ բուժօգնություն ցուցաբերելու համար նվազագույն պայմանների բացակայության, հիվանդին՝ համապատասխան հետազոտություններ անցնելու և հետագա բուժումը կազմակերպելու նպատակով մասնագիտացված բժշկական հաստատություն չտեղափոխելու հանգամանքները: Բացի այդ, պատշաճ և համակողմանի

քննություն կատարելու միջոցով պարզվի, թե արդյոք ազատությունից զրկման վայրի բժշկական մասում կան բավարար պայմաններ նման հիվանդություններով տառապող անձին անհրաժեշտ բուժօգնություն ցուցաբերելու համար, առկա է արդյոք համապատասխան մասնագիտացում ունեցող բուժանձնակազմ, առկա են արդյոք կանոնավոր հետազոտություններ իրականացնելու պայմաններ, անհրաժեշտ սարքավորումներ, համապատասխան դեղորայք.

10) հարցաքննվեն նաև մահացած անձի բուժումն իրականացրած բժշկական անձնակազմը և այլ անձինք՝ կատարված հետազոտությունները և դրանց արդյունքները, հիվանդի ստացած բուժումը, քրեակատարողական հիմնարկում գտնվելու ընթացքում մահացած անձի հիվանդության ընթացքը (դինամիկան) պարզելու նպատակով: Ընդ որում, էական նշանակություն ունեն ցուցաբերվող բուժօգնության արդյունքները՝ դրանց արդյունավետության աստիճանը, ձեռնարկված միջոցների՝ անձի առողջական վիճակը կարգավորելու հնարավորությունը.

11) տուժողի իրավահաջորդների կողմից ցանկություն արտահայտելու յուրաքանչյուր դեպքում, հնարավորության սահմաններում, կազմակերպվի տուժողի իրավահաջորդների ընդունելություն հսկող դատախազի մոտ, նախաքննության գաղտնիության սկզբունքի պահպանմամբ՝ հնարավորինս սպառիչ պարզաբանումներ տրամադրվեն վերջիններիս մտահոգող հարցերի կապակցությամբ.

12) ցուցաբերվի հետևողականություն, որպեսզի հանրային քրեական հետապնդման ժամկետները երկարաձգելու միջնորդություններում հստակ ներկայացվեն բոլոր այն գործողությունները, որոնք նախատեսվում է կատարել տվյալ ժամանակահատվածում, քննիչի կողմից պատշաճ ջանասիրություն չցուցաբերելու և նշված գործողությունները չկատարելու դեպքում քննարկվի վերջինիս վարույթից հեռացնելու և կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցը.

13) քրեակատարողական հիմնարկում մահվան դեպքում առգրավվի տուժողի անձնական գործը՝ քրեակատարողական հիմնարկի վարչակազմի և տուժողի փոխհարաբերությունները ուսումնասիրելու, դեպքի հետ հնարավոր պատճառահետևանքային կապը (դիմումների բովանդակությունը պարզելու և դրանց շուրջ քննություն կատարելու նպատակով) պարզելու նպատակով.

14) դեպքի իրական հանգամանքները պարզելու նպատակով առգրավվի քրեակատարողական հիմնարկի հանձնուքների և տեսակցությունների մատյանը, դրա շուրջ կատարվի քննություն:

15) միջոցներ ձեռնարկվեն մահացած անձի խցում խուզարկություն կատարելու ուղղությամբ՝ նրա կողմից շահագործված հեռախոս և այլ արգելված իրեր հայտնաբերելու

նպատակով: Այնուհետև, միջոցներ ձեռնարկվեն հայտնաբերված բջջային հեռախոսի թվային խուզարկություն կատարելու համար՝ դրանում քննությանը հետաքրքրող տվյալներ հայտնաբերելու նպատակով: